



ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ
ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԴԱՍԸՆԹԱՑՆԵՐ

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Մասնագիտություն՝ _____ ՏԵԽՆՈԼՈԳԻԱ

Թեմա՝ «Տեխնոլոգիա» առարկայի «Դիզայն» թեմայի դասավանդման
մեթոդիկական 6-րդ դասարանում

Կատարող՝ Հ. Հայրապետյանի անվան հ. 78 հիմն. դպրոցի ուսուցիչ
Վիրաբյան Լիլիթ Արմենի
Ազգանուն, անուն, հայրանուն

Ղեկավար՝ տեխ.գիտ.թեկն. դոցենտ Նունե Օրդյան
Ազգանուն, անուն, գիտական աստիճան, կոչում

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ.....3

ԳԼՈՒԽ 1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԴԻՋԱՅՆԻ ՄԱՍԻՆ

1.1 Դիզայն հասկացությունը և հիմնական սահմանումները.....5

1.2 Դիզայնի տարրերը..... 6

ԳԼՈՒԽ 2. ԳՈՒՅՆԵՐԻ ՏԵՍՈՒԹՅՈՒՆ

2.1 Հիմնական գույներ.....8

2.2 Գույների ստացումը.....8

2.3 Գույների երանգը.....10

2.4 Գույների և երանգների համադրությունն ինտերիերում.....10

ԳԼՈՒԽ 3. ԹԵՄԱՅԻ ԴԱՍԱՎԱՆԴՄԱՆ ՄԵԹՈԴԻԿԱՆ

Դասի պլան12

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ..... 15

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ16

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Ներկայումս Հայաստանը թևակոխել է կրթության բովանդակության բարեփոխումների փուլ: Տեղի ունեցող փոփոխությունները նոր պահանջներ են դնում ինչպես սովորողի, այնպես էլ ուսուցչի առջև:

Կրթական բարեփոխումները հատկապես կարևորվում են հանրակրթական դպրոցի «Տեխնոլոգիա» առարկայի դասավանդման մեջ:

Հանրակրթության պետական չափորոշիչով «Տեխնոլոգիան»՝ որպես ԲՏ&Մ ոլորտի պարտադիր առարկա, ուսումնասիրվում է 1-6-րդ դասարաններում:

Հանրակրթության նոր չափորոշիչն իր սկզբունքային մոտեցումներով, կառուցվածքով և բովանդակությամբ տարբերվում է նախկինից:

Չափորոշիչով սահմանվում են հանրակրթության հիմնական ծրագրերի բովանդակության հետևյալ բաղադրիչները՝

- 1) գիտելիք.
- 2) հմտություն.
- 3) դիրքորոշում.
- 4) արժեքային բաղադրիչ:

Ամբողջ փաստաթղթի հիմքում ընկած է կարողունակությունների (կոմպետենցիաների) վրա հիմնված կրթության բովանդակության կառուցման մոտեցումը, ինչը համահունչ է աշխարհի շատ երկրների կրթական համակարգերի զարգացման ժամանակակից միտումներին: Չափորոշիչով, որպես գերագույն նպատակ, սահմանվել է 8 առանցքային կարողունակությունների ձևավորումը: Նոր չափորոշիչի գլխավոր նորությունն այն է, որ այն կրթության բովանդակության կառուցման առարկայական մոդելից անցում է ապահովում կարողունակությունների վրա հիմնված կրթական մոդելի:

«Տեխնոլոգիա»-ն բազմաբնույթ և ինտեգրված առարկա է: Այն իր մեջ ընգրկում է գրաֆիկա (գծագրություն), մետաղամշակման և փայտամշակման տեխնոլոգիաներ, էլեկտրատեխնիկա և ռադիոտեխնիկա, ռոբոտաշինություն, հագուստի և սննդի պատրաստման տեխնոլոգիաներ, տնտեսագիտության հիմունքներ, նյութերի գեղարվեստական մշակում, ժողովրդական գեղարվեստական արհեստներ, մեքենագիտության տարրեր, շինարարական վերանորոգման և հարդարման աշխատանքներ, գյուղատնտեսական աշխատանքներ, դիզայն և այլն:

Տվյալ հետազոտական աշխատանքի մեջ ընդգրկված են «Տեխնոլոգիա» առարկայի կարևորագույն բաժիններից մեկի՝ «Դիզայն» բաժնի թեմաները, մասնավորապես «Գույն և գունավորում» թեման:

Հետազոտական աշխատանքի նպատակը կայանում է նրանում, որ դիզայն բաժնի դասավանդման, մասնավորապես՝ «Գույների տեսության» մեջ կիրառել ՏՀՏ-ներ և ժամանակակից ակտիվ կրթական մեթոդներ, որոնք դասը դարձնում են արդյունավետ, դյուրին և զարգացնում են երեխաների մտածողությունը և մտապահությունը, ուսուցումը դարձնում են աշակերտակենտրոն:

Նշված նպատակներին հասնելու համար նախատեսվում են թեմայի դասավանդման համար պատրաստել սահիկահանդեսներ, որոնք վերաբերվում են դիզայն բաժնի թեմաներին, մասնավորապես գույների տեսությանը: Հետազոտական աշխատանքի կատարման ընթացքում նախատեսվում է ուսումնասիրել տեղեկատվական և մասնագիտական գրականություն: Հետազոտական աշխատանքի արդյունքներով պատրաստվել են դասեր, որտեղ կիրառվել են ժամանակակից այնպիսի ակտիվ կրթական մեթոդներ, ինչպիսիք են «Մտքերի տարափ», «Խորանարդում», «Վենի դիագրամ» մեթոդները:

ԳԼՈՒԽ 1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԴԻԶԱՅՆԻ ՄԱՍԻՆ

1.1 Դիզայն հասկացությունը, հիմնական սահմանումները

Դիզայն տերմինն առաջացել է անգլերեն design բառից, որը նշանակում է նախագծել, գծագրել, մտահղանալ, պլանավորել, ինչպես նաև նախագիծ, գծանկար, յուրահատուկ, ոչ սովորական առաջարկություն, իսկ դիզայներ՝ սրամիտ կոնստրուկտոր:

«Design» բառը ծնվել է XVI դարում և լայն ճանաչում է ունեցել ամբողջ Եվրոպայում: Իտալական «disegno intero» արտահայտությունը նշանակել է «նկարչի մեջ ծնված և Աստվածացված գաղափար-համակցված արվեստ»: 1588 թվականին Օկսֆորդի բառարանը այս բառի նկարագիրը տալիս է հետևյալ կերպ՝ «Մարդու կողմից մտածված պլան կամ աղյուսակ ինչ-որ բանի, որը կլինի ապագայի բոլոր արվեստներում»: Դիզայնի տեսական հիմքը՝ տեխնիկական գեղագիտությունը, ուսումնասիրում է նրա հասարակական բնույթն ու զարգացման օրինաչափությունները, գեղարվեստական նախագծման սկզբունքներն ու եղանակները, դիզայներ-ճարտարագետի մասնագիտական վարպետության խնդիրները: Տեխնիկական գեղագիտության հիմնական բաժիններն են՝ դիզայնի ընդհանուր տեսությունը և գեղարվեստական նախագծման տեսությունը: Մեծ է դիզայնի դերը արդյունաբերության մեջ՝ արտադրանքի մրցունակության ապահովման առումով:

1964թ. Բելգիայում կայացած համաշխարհային սեմինարի ժամանակ դիզայնին տրվել է հետևյալ ձևակերպումը. «Դիզայնը ստեղծագործական գործունեություն է, որն ունի նպատակ որոշելու արդյունաբերական ապրանքների ձևական որակները (արտաքին տեսքը)»: Այդ որակները ընդգրկում են առարկայի արտաքին բնագծերը, բայց գլխավորը նրա կառուցվածքային և ֆունկցիոնալ փոխհարաբերական կապն է, որը դարձնում է առարկան մի ամբողջություն ինչպես կիրառողի, այնպես էլ արտադրողի տեսանկյունից: Դիզայնի սկզբունքները ձևավորվել են XIII դարի կեսերին, սակայն, որպես առարկայական միջավայրի տեսողական և գործառնական հատկությունների նպատակային ձևավորման միջոց, սկզբնավորվել է հիմնականում XX դարի սկզբին:

Դիզայնի հիմնական տեսակներն են՝

- Արդյունաբերական դիզայն
- Գրաֆիկական դիզայն
- Լանդշաֆտային դիզայն
- Ճարտարապետական դիզայն
- Հագուստի դիզայն
- Ֆիտոդիզայն
- Վեբ, ինտերնետ դիզայն
- Էկո դիզայն
- Ինտերիեր դիզայն
- Սեղանի դիզայն

1.2 *Դիզայնի տարրերը*

Վաղուց ի վեր, երբ մարդն աշխատում էր պարզ, հասարակ գործիքներով, ձգտում էր պատրաստել և կառուցել գեղեցիկ իրեր ու շինություններ: Դիզայնի նպատակն է ստեղծել նոր ոճի առարկաներ, որոնք համապատասխանում են հասարակության պահանջներին, օգտակար և հարմար են շահագործելիս, ունեն գեղեցիկ ու հաճելի արտաքին տեսք: Դիզայնեական գործունեության լավագույն արդյունք ապահովելու համար անհրաժեշտ է ուշադրություն դարձնել յուրաքանչյուր տարրի վրա:

Դիզայնի հիմնական տարրերն են՝

- Տարածությունը
- Գիծը
- Պատկերը
- Տեքստուրան
- Գույնը, ձևը, լույսը և ստվերը
- Չափսը

Տարածությունը հասկացությունը գործողությունների տեղ է, հրապարակ, որտեղ գտնվում է ամբողջ կոմպոզիցիան: Տարածությունը կարող է լինել երկչափ և եռաչափ: Եռաչափ տարածությունում առարկաներն ունեն ծավալ և խորություն:

Գծերի օգնությամբ նշվում են եզրագծերը կամ ուրվագծերը: Գծերը լինում են կոր, հորիզոնական, ուղղաձիգ, ալիքաձև, զուգահեռ, փոխուղղահայց և այլ տեսակների:

Պատկերը ձևավորվում է, երբ գիծը հատում է ինքն իրեն, կամ մեկ այլ գծի: Պատկերները լինում են երկրաչափական (շրջան, ուղղանկյուն, եռանկյուն) և օրգանական (տերևի, ծաղկի, խիտունջի ուրվագիծ):

Գույնն առարկաներին հաղորդում է զգացմունքներ և հնարավորություն է տալիս առանձնանալ միջավայրից: Գույնի օգնությամբ հնարավոր է ուշադրությունը կենտրոնացնել առարկայի որոշակի հատվածի վրա:

Տեքստուրան առարկային հաղորդում է տեսք կամ շփման զգացողություն: Տեքստուրան կարող է լինել հարթ, խորդուբորդ, փափուկ: Տարբերում են փայտի, թղթի, գործվածքի, կաշվի տեքստուրաներ:

Ձևն ունի լայնություն, բարձրություն և խորություն: Եռաչափ առարկան՝ ի տարբերություն պատկերի, իրենից ներկայացնում է ձև: Ձևն արտահայտվում է լույսի և ստվերի միջոցով: Երկու կամ ավելի պատկերների միավորումից կարող է առաջանալ ձև:

Լույսն ու ստվերը որոշում են առարկայի նկատմամբ կիրառվող լուսավոր և մութ հատվածների հարաբերությունը: Լույսի և ստվերի շնորհիվ է, որ նկարների վրա առաջանում է խորություն:

Չափսը կոմպոզիցիայի յուրաքանչյուր դիզայնեական տարրն է, որն այլ տարրերի համեմատությամբ օժտված է որոշակի չափսերով կամ ծավալով: Չափսերը կարգավորելով՝ կարելի է ապահովել ուշադրություն, հաղորդել տրամադրություն, առանձնացնել տեղեկատվություն:

ԳԼՈՒԽ 2. ԳՈՒՅՆԵՐԻ ՏԵՍՈՒԹՅՈՒՆ

Ստեղծագործության կարևոր գործընթացները իրականացվում են գույներիճիշտ համադրությամբ և երանգների ճիշտ ընտրությամբ: Ճիշտ համադրելով այս կամ այն գույնը, կարելի է ստեղծել տպավորություն՝ թեթևության և ծանրության, սառի և տաքի, տարածքի ընդարձակության և սեղմվածքի: Գույնը հանդիսանում է տրամադրության վրա ներգործող գեղագիտական միջոց, այն կարող է բարձրացնել և իջեցնել մարդու էմոցիոնալ վիճակը կամ տոնուսը, ստեղծել ստեղծագործական վերելքի տպավորություն: Գույնը, մարմնի տեսողական որոշակի զգացողություն առաջացնող հատկություն է, որը պայմանավորված է առաքվող կամ անդրադարձվող ճառագայթների սպեկտրային կազմությամբ:

Գույնը բնութագրվում է երանգ, հագեցվածություն և պայծառություն հասկացություններով:

Երանգը գույնի տարբեր աստիճանի մուգ և բաց վիճակներն են: Յուրաքանչյուր գույնի երանգներ ստանալու համար անհրաժեշտ է ավելացնել տարբեր քանակությամբ սպիտակ կամ սև գույներ:

Գոյություն ունեն բազմաթիվ տարբեր գույներ և երանգներ: Դրանց քանակը հնարավոր չէ հաշվել: Տարբեր գույների խառնումից ստացվում են նոր երանգներ: Գույները կանոնակարգելու համար մասնագետները կիրառում են տարբեր համակարգեր, օրինակ՝ «գույների շրջան- 12 գույների շրջան» համակարգը:

Հագեցվածությունը գունային երանգի արտահայտման աստիճանն է: Ինչքան փոքր է հագեցվածությունը, այնքան գույնը քիչ է տարբերվում անգույն կամ գորշ վիճակից: Օրինակ, եթե մաքուր կարմիր գույնի ներկին խառնենք մի փոքր սպիտակ կամ սև գույնի ներկ, գունային երանգը դրանից չի փոխվի, բայց ստացված նոր գույնը կլինի ավելի քիչ հագեցված:

Պայծառությունը գույնի լուսավորության աստիճանն է: Գույնին եթե ավելացնեն սպիտակ, կմեծանա պայծառությունը, իսկ սև ավելացնելու դեպքում պայծառությունը կնվազի:

Գույնը պատկերման միջոցներից մեկն է կերպարվեստում: Գեղանկարչության ու գրաֆիկայի մեջ գույնի օգնությամբ վերարտադրվում է պատկերվող օբյեկտի նյութեղենությունն ու ձեր, տարածական հարաբերությունը, լուսավորությունը, օդային միջավայրը և այլն:

2.1 Հիմնական գույներ

Հիմնական գույները երեքն են՝ կարմիրը, դեղինը և կապույտը: Այս գույները անհնար է ստանալ այլ գույներ իրար խառնելով, ընդհակառակը, այս երեք գույները խառնելով մենք ստանում ենք մնացած բոլոր գույները: Հիմնական գույները, ինչպես նաև սևը և սպիտակը (որոնք գույներ չեն համարվում), իրար խառնելով կարող ենք ստանալ ցանկացած գույնի ցանկացած երանգ: Հիմնական գույներից ստացված այդ գույները և երանգները կոչվում են երկրորդային գույներ՝ կանաչ, մանուշակագույն և նարնջագույն:

Գույների տեսակները

Յուրաքանչյուր գույն ունի իր կարևորությունը և ազդում է մարդու գիտակցության վրա տարբեր ձևով: Տեսնելով որևէ գույն՝ մարդն ունենում է որոշակի հուզական ապրումներ, բարձրանում կամ ընկնում է տրամադրությունը: Այս իմաստով գույները լինում են տաք, սառը և չեզոք:

Տաք են կոչվում կրակի և արևի գույները: Դրանք են կարմիրը, դեղինը, նարնջագույնը և դրանց երանգները: Այս գույներն ունեն ակտիվ ներգործություն, բարձրացնում են տրամադրությունը, քաջալերում:

Մառն են կոչվում ջրի և սառույցի գույները՝ կապույտն իր երանգներով, կանաչը մանուշակագույնը: Մառը գույները հանգստացնող են, տրամադրում են անդորրի: Չեզոք գույներն են սպիտակը և գորշը:

2.2 Գույնի ստացում

Գույնի ստացումը բաժանվում է 2 եղանակի՝

- ադետիվ մեթոդ
- սուբտրակտիվ մեթոդ: Ադետիվ մեթոդ

Ադետիվ մեթոդը կամ գույների միախառնելու մեթոդը աշխատում է գլխավոր երեք գույները իրար միախառնելիս: Եթե, օրինակ, միաժամանակ էկրանի վրա ուղղորդվի երեք լուսային ճառագայթ (կարմիր, կանաչ, կապույտ), ապա նրանց պայծառությունը (ինտենսիվությունը) կառավարելով՝ կարող ենք ստանալ բոլոր մնացած գույները:

Սուբտրակտիվ մեթոդը երկրորդային կանաչ, նարնջագույն և մանուշակագույն գույների խառնումից առաջնային կարմիր, դեղին և կապույտ գույների ստացումն է:

Գունաթափանցում

Գունաթափանցում, լեսում (գերմ.՝ Lasierung), գեղանկարչության մեջ ներկերի նուրբ թափանցիկ կամ կիսաթափանցիկ շերտեր, որոնցով ծածկում են նկարի չորացած կամ կիսաչոր ներկաշերտերը՝ գունային տոները փոփոխելու՝ ուժեղացնելու կամ թուլացնելու, կոլորիտը հարստացնելու, նրա ներդաշնակությանն ու միասնությանը հասնելու նպատակով: XVI — XIX դարերում գեղանկարիչները նկարը սովորաբար ավարտում էին գունաթափանցումով:



Արեգակի լույսը թվում է սպիտակ, սակայն իրականում այն պարունակում է ծիածանի բոլոր գույները: Սպիտակ լույսի ճառագայթը, անցնելով ապակե պրիզմայի միջով, բեկվում է և առաջացնում գույների լուսապատկեր կամ սպեկտոր: Դրա կազմի մեջ մտնում են յոթ գույները՝ կարմիր, նարնջագույն, դեղին, կանաչ, կապույտ, երկնագույն և մանուշակագույն:

Բնության մեջ գույների ամենագեղեցիկ հերթագայումը ծիածանի գույներն են: Որպեսզի երբեք չմոռանանք ծիածանի գույների հերթականությունը, ընդամենը պետք է հիշել հետևյալ արտահայտությունը, որի առաջին տառերը խորհրդանշում են ծիածանի գույները: Ծիածանի գույների հերթագայումը հիշելու համար հաճախ կիրառում են հետևյալ բառակապակցությունը՝

Կատուն նստած դռան կողքին երագում էր կերի մասին (կարմիր, նարնջագույն, դեղին, կանաչ, երկրագույն, կապույտ, մանուշակագույն) կամ ռուսերեն՝ каждый охотник желает знать где сидит фазан (красный, оранжевый, желтый, зеленый, голубой, синий, фиалетовый).

2.3 Գույների երանգները


Յուրաքանչյուր գույն ունի իր հիմնային գունային երանգները՝ վառ, լուսավոր, հագեցված, խիտ և այլն: Բոլոր տարատեսակ գույները կարելի է ամբողջացնել երեք հիմնական սյունակով.

1. Մոխրագույն շարքի՝ ախրոմատիկ երանգ-սպիտակից մինչև սև գույնը:
2. Քրոմատիկ երանգ կամ գույնի սպեկտոր-որը բաժանվում է հետևյալ տպավորության՝
 - ա) տաք երանգ-դեղին, գազարագույն, կարմիր և դրանց երանգային վիճակները:
 - բ) սառը երանգ-կանաչ, կապույտ, մանուշակագույն:
 - գ) հավելյալ գույներ-կապույտ-գազարագույն, կանաչ-կարմիր, մանուշակագույն կարմիր:
3. Գույներ, որոնք քրոմատիկից գնում են դեպի աքրոմատիկ. Օրինակ՝ կանաչից դեպի սպիտակ, կանաչից դեպի սև, կանաչից դեպի մոխրագույն:

Փոփոխելով գույները, մենք կարող ենք ստանալ նրա հազարավոր երանգները:

2.4 Գույների և երանգների համադրությունն ինտերիերում

Ներքին ճիշտ ընտրված գույնը կարող է տեսողականորեն ավելացնել կամ նվազեցնել սենյակի ծավալը, բերել թեթևություն և հանգստություն, կամ հակառակը՝ ճնշել մեզ: Ստեղծելով ննջասենյակի ինտերիերը, դուք պետք է իմանաք, թե ինչպես համատեղել տարբեր գույներ, որպեսզի այնտեղ մնալու առավելագույն հնարավորությունը ստանաք:



Գունային սխեման բաժանվում է «տաք», «ցուրտ» և «չեզոք» գույների: Դեպի տաք ներառում են կարմիր, նարնջագույն և դեղին, ինչպես նաև դրանց բոլոր երանգները: Դեպի ցուրտ գույները ներառում են կապույտ, կանաչ և դրանց երանգները: Պետք է նշել, որ դեղին կամ կարմիր գերակշռությամբ կանաչը վերաբերում է տաքին: Եվ եթե կանաչը ավելի կապույտին մոտ է, ապա այն ավելի մոտ է ցուրտին: Չեզոք գույները սպիտակ, սև և մոխրագույն են:

Ինչպես արդեն նշվեց, որոշակի գույները կարող են տեսողականորեն ավելացնել կամ նվազեցնել սենյակի ծավալը: Տեսողականորեն բարձրացրեք սենյակը նահանջող գույների օգնությամբ: Դրանք ներառում են ցուրտ երանգների ամբողջ գամման: Մառեցնող գույները օգտագործվում են սենյակը տեսողականորեն նվազեցնելու համար: Դրանք ներառում են տաք գույների ամբողջ տեսականի: Օգտագործելով ճիշտ գույների համադրություն, կարող եք ընտրել կամ հակառակը տեղափոխել ննջասենյակի դեկորի յուրաքանչյուր տարր, ընդլայնել դրա ծավալը կամ հակառակը՝ նվազեցնել այն: Օրինակ, եթե ննջասենյակը փոքր է, ապա դրա ինտերիերի գույնը կարելի է կատարել կապույտ և սպիտակ երանգներով: Մասնավորապես՝ կապույտ պաստառներ, կապույտ շեշտադրումներով սպիտակ կահույք, ձյան սպիտակ մահճակալ կամ կապույտ շեշտադրումներով սպիտակ մահճակալ: Այս դեպքում ննջասենյակի համար պաստառների կապույտ գույնը կտարածի իր սահմանները, իսկ սպիտակ կահույքն ու մահճակալը կտան սենյակի թեթևությունն ու ծավալը: Ննջասենյակի ինտերիերի համար գունային սխեման ընտրելով, անհրաժեշտ է պահպանել մեկ այլ կարևոր պահանջ՝ գույնի ներդաշնակություն: Գույնի ներդաշնակությունը գույների որոշակի համադրություն է, որը բարենպաստորեն ազդում է գույնի գեղարվեստական արտահայտչության վրա: Գույնի ներդաշնակությունը կարող է լինել նրբերանգ և հակապատկեր: Նրբերանգների ներդաշնակության սկզբունքը տոնային գույներով և փափուկ երանգներով նմանատիպ օգտագործելն է: Ավելին, եթե ննջասենյակը կահույք է օգտագործում մուգ երանգներով, ապա ինքնաթիռների մեծ մասը ներկված է թեթև գույներով: Ննջասենյակում գույնի նրբագեղ ներդաշնակությունը բնորոշ է փոքր սենյակներին և առավել հաճախ օգտագործվում է ննջասենյակների, տնկարանների, պահարանների համար: Բայց բացի նրբերանգի ներդաշնակությունից, կա նաև հակադրություն: Հակադրության սկզբունքը բավականին պարզ է: Այն կառուցված է ներդաշնակ օգտագործումը տարբեր գույներ և երանգներ: Այս դեպքում խորհուրդ է տրվում օգտագործել ոչ ավելի, քան երեք տարբեր գույներ: Հակառակ դեպքում սենյակը կդառնա ծանրաբեռնված և արագ կհոգնի: Ամենից հաճախ հակադրությունների լուծումը հիմնված է երկու երանգների օգտագործման վրա: Օրինակ նարնջագույն և կապույտ, դեղին և կապույտ, սպիտակ և սև:

Դասի պլան

Ուսուցիչ՝ Լ. Վիրաբյան

Հ. Հայրապետյանի անվան հ. 78 հիմնական դպրոց

Առարկա	Տեխնոլոգիա
Դասարան	VI
Դասի թեմա	«Գույն և գունավորում»
Օգտագործվող նյութեր՝	Դասագիրք, էլեկտրոնային գրատախտակ, Տեսանյութ դիզայնի պատմության մասին
Դասի նպատակ	<p><u>Ձևավորել</u></p> <ul style="list-style-type: none"> • Գույն և գունավորում հասկացությունների և նշանակության մասին պատկերացում: <p><u>Զարգացնել հմտություններ</u></p> <ul style="list-style-type: none"> • Զարգացնել ճաշակ, • Ձևավորել գեղեցիկը գնահատելու ունակություններ, • Ունեցած ինֆորմացիայի ամրապնդում <p><u>Դաստիարակչական</u></p> <ul style="list-style-type: none"> • Խմբային աշխատանքի ժամանակ խմբում աշխատելու ունակություն, • ընկերասիրություն, համբերատար և զիջող վերաբերմունք ընկերների նկատմամբ, • կարգապահություն, ճշտապահություն
Վերջնարդյունքները	<p><u>Գիտելիք</u></p> <ul style="list-style-type: none"> • Ի՞նչ է դիզայնը: • Որո՞ն են դիզայնի հիմնական տարրերը: • Որո՞նք են գույների տեսակները: • Որո՞նք են գույների երանգները: <p><u>Հմտություններ</u></p> <ul style="list-style-type: none"> • Կիմանան ինչպես ներդնել դիզայնի տարրեր: • Իմանա ինչ գույներով աշխատել: • Կարողանա կատարել կոմպոզիցիոն աշխատանքներ: • Ինքնուրույն մշակել լանդշաֆտային միջավայրի դիզայն: <p><u>Վերաբերմունք</u></p> <ul style="list-style-type: none"> • կարևորի սեփական ուժերով տվյալ թեմայի շրջանակներում հետազոտություն իրականացնելը, • կարևորի ժամանակն արդյունավետ օգտագործման հմտության զարգացումը, • կարևորի ինքնակրթության մեթոդների զարգացումը <p><u>Արժեք</u></p> <ul style="list-style-type: none"> • արժևորի ձեռք բերված գիտելիքների կիրառման դերը շրջապատող աշխարհում:

**Դասի ընթացք/
ընտրված մեթոդներ**

Մեթոդներ՝ «Զրույց», «Մտագրոհ», «Վենի դիագրամ», «Խորանարդում»:

1. Կազմակերպչական մաս
2. Հաճախումների ստուգում
3. Նախորդ նյութի ստուգում և ամփոփում հարցերի միջոցով՝

- Ի՞նչ է կոմպոզիցիան:
- Որո՞նք են կոմպոզիցիայի կատեգորիաները:
- Ի՞նչ է «Ոսկե թիվը»:

Նոր նյութի հաղորդում՝ Մեթոդ՝ «Մտագրոհ» Բանալի բառ՝ «Գույն»
Մեթոդին հատկացվում է 5 րոպե ժամանակ, ընթացքը՝ 3 րոպե, մեթոդին կարագրություն՝ 2րոպե:

Խթանման փուլը բացահայտում է նոր նյութի վերաբերյալ սովորողների ունեցած գիտելիքները:

Իմաստի ընկալման փուլի նպատակները.

1. Սովորողի մոտ հետաքրքրության աճի պահպանում:
2. Տեղեկատվության ընկալման, ինքնավերահսկման ապահովումը:
3. Նոր և հին տեղեկատվության շաղկապումը և իմացության նոր կառույցի ստեղծումը:

Դասի իմաստի ընկալման փուլում նպատակահարմար է կիրառել «Վենի դիագրամ» մեթոդական հնարը:

Վենի դիագրամը կառուցվում է երկու կամ ավելի շրջանաձև պատկերների միջոցով, որոնք կենտրոնում ունեն հատման մեծ մակերես: Այս դիագրամը կարելի է օգտագործել գաղափարները միմյանց հակադրելու կամ դրանց ընդհանրությունները ցույց տալու նպատակով: Վենի դիագրամով հստակ առանձնացվում են երկու հասկացությունների ընդհանրությունները և շեշտվում են յուրաքանչյուրի բնորոշ առանձնահատկությունները:

Կշռադատման փուլի նպատակն է, որ սովորողը նոր ստացած տեղեկությունն արտահայտի իր բառերով և ձևակերպումներով:

Մտքերի տարափ

Դասի խթանման փուլում որպեսզի վեր հանվեն սովորողների գիտելիքները գույների և գունավորման մասին որպես բանալի բառ ընտրվել է «ԳՈՒՅՆ» բառը:

Դասի կշռադատման փուլում նպատակահարմար է կիրառել <<Խորանարդում>> մեթոդը:

<p>Միջառարկայական կապերը</p>	<p>Հայոց լեզու - Կարդալ, հասկանալ կարդացածը, առանձնացնել կարդացածի կարևոր (պահանջվող) գաղափարները: Կարողանա ներկայացնել նյութի հիմնական գաղափարը բանավոր և գրավոր: Կարողանա ճիշտ ձևակերպել հարցերը, այդ թվում՝ հետազոտական հարց:</p> <p>Կերպարվեստ – Կատարի գծանկար, էսքիզ: Պատկերացում ունենա գույների մասին, ընտրի ներդաշնակ գույներ:</p> <p>Բնություն – Պատկերացում ունենալ բնության մեջ տեղի ունեցող երևույթների վերաբերյալ:</p> <p>Թվային գրագիտություն և համակարգչային գիտություն - Աշխատանք տեքստային խմբագրիչներով, ցուցադրական նյութերի պատրաստման և համացանցում որոնողական աշխատանքների հմտություններ:</p>
<p>Կապը ՀՊԶ-ի հետ</p>	<p>Հ26 - ցուցաբերի իր գործունեությունը պլանավորելու և ժամանակն արդյունավետ տնօրինելու կարողություններ,</p> <p>Հ28 - դրսևորի հետազոտելու, փորձարկելու, տարբեր գործիքակազմեր համադրելու կարողություն, ուրիշների հետ համատեղ կամ ինքնուրույն մշակի և իրականացնի նախագծեր,</p> <p>Հ30 - գտնի և օգտագործի տեղեկություն տարբեր աղբյուրներից, որոշի և բնութագրի աղբյուրի արժանահավաստությունը և այն օգտագործելիս կատարի հղումներ,</p> <p>Հ32 - արդյունավետ կազմակերպի իր ուսումնական գործընթացը և ավարտի աշխատանքներն առանց անմիջական վերահսկողության, կիրառի ինքնակրթության որոշ մեթոդներ,</p> <p>Հ51 - կարողանա բացահայտել և զարգացնել իր հետաքրքրություններն ու նախասիրությունները և կատարել նախնական ինքնորոշում՝ հիմնվելով մասնագիտական կրթության հնարավորությունների վրա:</p>

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Ամփոփելով կատարված հետազոտական աշխատանքը՝ կարելի է անել հետևյալ եզրակացությունները.

- Տեխնոլոգիա առարկայի ուսուցումը նպատակաուղղված է «Հանրակրթության պետական չափորոշիչ» փաստաթղթով սահմանված վերջնարդյունքների ձևավորմանը:
- Դիզայնի մասին տեղեկությունները և գիտելիքները անհրաժեշտ և օգտակար են բոլոր սովորողների համար և հատկապես դպրոցականների գեղագիտական գիտելիքների զարգացման համար:
- Դիզայն թեմայի դասավանդման գործընթացում ՏՀՏ-ների և ակտիվացնող կրթական մեթոդների կիրառումը դասը դարձնում է ինտերակտիվ և աշակերտակենտրոն, հետաքրքիր և դյուրին:
- Դիզայնը այսօր ներմուծվել է մարդու գործունեության բոլոր ոլորտները՝ արտադրություն, կենցաղ, հանգիստ: Առանց դիզայնական լուծումների այսօր անհնար է կազմակերպել որևիցե մի ապրանքի արտադրություն, լինի դա սննդամթերք, հագուստ, կահույք, կենցաղային տեխնիկա, էլեկտրատեխնիկա, ավտոմոբիլ կամ բնակարան:

Հետազոտական աշխատանքում տեղ գտած նյութերը ունեն գործնական նշանակություն և կարող են օգտագործվել Տեխնոլոգիա դասավանդող ուսուցիչների կողմից, որպես ուսումնամեթոդական նյութ:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Ս.Հովսեփյան, Ա. Հարությունյան, Մ.Աղաջանյան, Լ. Վերդյան Տեխնոլոգիա 7-րդ դասարանի դասագիրք Եր., Տիգրան Մեծ. 2016:
2. «Տեխնոլոգիա» առարկայի չափորոշիչ և ծրագիր: ՀՀ ԿԳՆ նախարարություն Ս.Հովսեփյան, Մ.Աղաջանյան, Մ. Բարսեղյան, Երևան 2012թ.:
3. Ս. Հովսեփյան, Ա. Հարությունյան, Մ. Աղաջանյան, Լ. Վերդյան <<Տեխնոլոգիա>> 5-7-րդ դասարանների ուսուցչի ձեռնարկ-Եր. Տիգրան Մեծ, 2014. 96 էջ:
4. Մասնագիտական զարգացման ձեռնարկ ուսուցիչների համար /Ա.Արնատյան, Ա.Գյուլբուդաղյան, Ս.Խաչատրյան և ուրիշ. –Եր.: Կրթության ազգային ինստիտուտ հրատ.2004.-180էջ:
5. Ռուս-Հայերեն պոլիտեխնիկական բառարան (Զ.Հ. Հացագործյան, Ա.Հ. Ղարիբյան, Ն.Գ. Հովուսյան, Գ.Հ. Սրվանձտյան) –Եր.: ՀԱՀ. 1988. 672 էջ:
6. Кочегаров Б.Е. Промышленный дизайн: Учеб. Пос. Владивосток: Изд-во ДВГТУ, 2006.7.Циганкова Э.У. Истоки дизайна. Интернет книга для осуждения. 2004.
7. Мунипов В.М., Зинченко В.П. Эргономика: человеко-ориентированное проектирование техники, программных средств и среды: Учебник.-М.: Логос, 2001.
- 8.Рунге В.Ф., Сеньковский В.В. Основы теории и методологии дизайна: Учеб. Пособие(Конспект лекций)-М.: МЗ-Пресс 2003.
- 9.Устинов А.Г. Цвет в производственной среде.-М.: ВНИИТЭ, 1967.
- 10.Лазарев Е.Н. Дизайн: от формы вещи до духа человека//Дизайн для всех. Альманах.-М.: 1992.№1.